ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

ք. Աշտարակ **25.04.2022թ. ժամը 12^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Հ. Գույլան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Է. Փարվանյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հր. Գևորգյան	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ա. Գրիգորյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ռ. Թադևոսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դատումյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Մ. Հովհաննիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ

Մարզպետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների ղեկավարներ

Ուժային կառույցների ներկայացուցիչներ

Զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Մովսիսյանը: Նա ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որի վերաբերյալ առաջարկություններ չեղան, և օրակարգը հաստատվեց:

Օրակարգում՝

1. Ապրիլի 30- ին կայանալիք համապետական շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

2. Ալագյազ համայնքում 2022թ. մարտի 22-ից 24-ը իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման ուղղությամբ կատարված աշխատանքների և 2021թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր համայնքներում առկա խնդիրների վերաբերյալ:

3. Մարզում COVID-19 – ի դեմ պատվաստումային գործընթացը:

4. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ-ի) կողմից ՀՀ Արագածոտնի մարզում 2022-2023 թվականներին իրականացվելիք աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

5. Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

6. Համայնքային եկամուտների հավաքագրման աշխատանքների, համայնքների 2022 թվականի 1-ին եռամսյակի ծախսերի կատարողականների, մարզի համայնքների կողմից միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման ու հաստատման և համայնքների գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

7. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021-2022 թվականների սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

8. Հողամասերի նպատակային նշանակության և հաղատեսքերի փոփոխությունների վերաբերյալ:

9. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների առկա խնդիրները:

10. Համայնքային ենթակայության մանկապարտեզների լիցենզավորման մասին:

Լսեցին՝

1. **Ապրիլի 30-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ** */զեկուցող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Է. Փարվանյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց համայնքի ղեկավարներին շաբաթօրյակը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով հստակեցնել և առավել արդյունավետ բաշխել պետական և համայնքային ներուժը, հստակեցնել իրականացման գործողությունների պլանն ու տարածքների սխեմաները, դրանք տեղադրել մարզպետարանի և համայնքների պաշտոնական կայքերում: Հատուկ ուշադրություն դարձնել և հսկողություն իրականացնել հեռացվող աղբը սահմանված վայրերում թափելու գործընթացին և աշխատանքներ տանել քաղաքացիների, մարզային, համայնքային կազմակերպությունների, կրթական հաստատությունների, մասնավոր ընկերությունների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին ապահովելու ուղղությամբ:

2. **Ալագյազ համայնքում 2022թ. մարտի 22-ից 24-ը իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման ուղղությամբ կատարված աշխատանքների և 2021թ. դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր համայնքներում առկա խնդիրների վերաբերյալ** / զեկուցող՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:

/Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց համայնքի ղեկավարներին, որպեսզի համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքներն ավարտվեն հնարավորինս սեղմ ժամկետում:

ՏԻՄ ընտրությունների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր համայնքներում առկա խնդիրների վերաբերյալ մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչությունը պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում ցուցաբերել համապատասխան մեթոդական աջակցություն:

3. **Մարզում COVID-19 – ի դեմ պատվաստումային գործընթացի մասին** / զեկուցող առողջապահության բաժնի պետ Մ. Շահազիզյան/:

/Զեկույցը կցվում է/:

Առողջապահության բաժնի պետը ներկայացրեց, որ Արագածոտնի մարզում Covid19-ի դեմ այս պահի դրությամբ առաջին դեղաչափով պատվաստվել են մարզի 18 և բարձր տարիքի բնակչության 52.2%-ը: Կարևորվեց համայնքի ղեկավարների աջակցությունը, որպեսզի հորդորեն ազգաբնակչությանը ստանալու պատվաստումների առաջին, երկրորդ և նաև խթանիչ դեղաչափերը, որպեսզի հնարավորինս արագ ազատվենք համավարակից:

4. **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ-ի) կողմից ՀՀ Արագածոտնի մարզում 2022-2023 թվականներին իրականացվելիք աշխատանքների ընթացքի վերաբերյալ**/ *զեկուցող՝ զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Գ.Պողոսյան*/:

/Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին աջակցել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից, 2022-23թթ ՀՀ Արագածոտնի մարզի 7 համայնքներում իրականացվելիք մի շարք ծրագրերին, որոնք միտված են համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վերականգնմանն ու նորերի ստեղծմանը և ներառում են կրթության, համայնքային ենթակառուցվածքների/հասարակական նշանակության շինություններ/ և տնտեսական զարգացման ոլորտները:

5. **Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ** /*զեկուցող՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան*/:

/Զեկույցը կցվում է/:

Մարզպետը կարևորեց պետության կողմից առաջարկվող գյուղատնտեսական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը և առաջարկվեց համայնքների ղեկավարներին ավելի ակտիվ մասնակցություն ունենանալ այդ ծրագրերի ներդրման աշխատանքներին, շարունակել պատշաճ իրազեկում կազմակերպելու գործընթացը:

6. **Համայնքային եկամուտների հավաքագրման աշխատանքների, համայնքների 2022 թվականի 1-ին եռամսյակի ծախսերի կատարողականների, մարզի համայնքների կողմից միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման ու հաստատման, համայնքների գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ** / *զեկուցող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյան*/:

Ն. Գալստյանը ներկայացրեց սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները, հավաքագրման գործընթացը բարելավելու ուղղությամբ տարվող աշխատանքների, այդ աշխատանքներում թերացող համայնքների մասին: Նշեց, որ առաջին եռամսյակի հավաքագրման ցուցանիշը 21,3 % է: Սեփական եկամուտների հավաքագրման մասով լավագույն արդյունք են ապահովել Շամիրամ և Ալագյազ համայնքները, իսկ ամենացածր ցուցանիշներ ունեն Մեծաձոր և Արևուտ համայնքները: Խոսվեց նաև համայնքների միջնաժամկետ ծախսային ծրագրեր կազմելու գործընթացը մինչև ս/թ հոկտեմբերի 10

ավարտելու և ներկայացնելու մասին, որին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը պատրաստ է տրամադրել մասնագիտական աջակցություն:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանն էլ հորդորեց համայնքների ղեկավարներին ավելի գործուն աջակցություն ցուցաբերել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին՝ նշելով, որ համայնքներում իրականացվելիք ծրագրերի ծավալները և հնարավորությունները դրանից են կախված:

/Ցուցանիշները կցվում են/:

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանը ներկայացրեց նաև ՀՀ Արագածոտնի մարզպետին ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկված 26.01.2022թ. թիվ 36/36.2/990-2022 միջնորդագիրը գնման գործընթացում արձանագրված խախտումների վերաբերյալ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվեց համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրել սեփական լիազորությունների անշեղ իրականացմանը և օրենսդրական պահանջների պահպանմամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հետագայում նմանատիպ դեպքերը, ինչպես նաև դրանց արդյունքում հնարավոր հետևանքները բացառելու ուղղությամբ:

7.**Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021-2022թվականների սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի կազմակերպման վերաբերյալ** / *զեկուցող քաղաքաշինության վարչության պետ Հ.Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Մարզպետի տեղակալ Հ. Գուլյանը համայնքների ղեկավարներին տեղեկացրեց, որ սուբվենցիոն ծրագրերի ներկայացման ավարտին մնացել է 2 օր և անհրաժեշտ է հնարավորինս արագացնել գործընթացը:

8. **Հողամասերի նպատակային նշանակության և հողատեսքերի փոփոխությունների վերաբերյալ** /*զեկ. հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ Գ.Մանուկյան/*:

/Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց միջոցներ ձեռնարկել ընդերքօգտագործող ընկերությունների կողմից իրենց տրամադրված լիցենզիայով նախատեսված հողամասի և փաստացի օգտագործվող հողամասի սահմանները ճշգրտելու, դրանց նպատակային նշանակությունները փոխելու և օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրելու ուղղությամբ և կանխարգելել ու կասեցնել ապօրինի հողօգտագործումները:Ուշադրություն դարձնել նաև գյուղատնտեսական հողերի հողատեսքերի ինքնակամ փոփոխությունների վրա:

9. **Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների առկա խնդիրները** / *զեկ. ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի պետ Լ.Ղարիբյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Կարևորվեց համայնքների խոշորացումից հետո խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների առավել համակարգված և համագործակցային կազմակերպումը, որի համար համայնքների ղեկավարների աջակցությունը խիստ անհրաժեշտ է:

10. **Համայնքային ենթակայության մանկապարտեզների լիցենզավորման մասին** / *զեկ. կրթության բաժնի պետ Ռ. Նալբանդյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Սահմանված կարգով մանկապարտեզները նախադպրոցական կրթական ծրագրեր կարող են իրականացնել համաձայն << կառավարության 09.06.2009թ. N 808-Ն որոշման հավելված 1-ի և 2-ի պահանջների՝ լիցենզիա ունենալու դեպքում: Այդ մասին բազմիցս շրջաբերականներ են ուղարկվել համայնքներ: Նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա ունի 12 մանկապարտեզ, որից 11-ը Աշտարակ (Աշտարակ 5, Նոր Երզնկա, Սասունիկ, Ուջան, Փարպի, Օշական 2), 1-ը՝ Թալին համայնքներում: Առաջարկվեց համայնքների ղեկավարներին գործուն աջակցություն ցուցաբերել լիցենզավորման գործընթացն ավարտին հասցնելու համար:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և նշեց, որ մարզն առաջընթաց կունենա արդյունավետ համագործակցության և միասնականության արդյունքում:

Սերգեյ Մովսիսյան